ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

թիվ 03- 25

«08» փետրվարի 2011թ

Լոռու մարզպետ

պարոն Ա. Քոչարյանին

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2011թ. փետրվարի 4-ի թիվ 1-Ն-5 որոշումները և Թումանյան համայնքի ղեկավարի թիվ 5-Ն որոշումը:

Թումանյանի քաղաքապետ / Լ. Զավարյան /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«04» փետրվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 1-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի.

1.Հաստատել Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն՝
1)եկամուտների գծով՝ 28519.3 հազ. դրամ
2)ծախսերի գծով՝ 29448.9 հազ. դրամ
3)դեֆիցիտը (պակասուրդը)՝ 929.6 հազ. դրամ

2.Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի եկամուտները՝ ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:
3.Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:
4. Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:
5. Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը (պակասուրդը)՝ համաձայն հատված 4-ի:
6. Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի դեֆիցիտի (պակասուրդի)՝ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:
7.Հաստատել Թումանյան համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:
8.«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
1)թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև,
2)սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել հաստատված չափաքանակների 15%-ը:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ			Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան	Անահիտ	Հովհաննեսի			
Արզումանյան	Աշխեն	Աշխարհբեկի			
Մարուքյան	Միհրան	Շաքարի			
Շահվերդյան	Սեյրան	Սուրիկի			
Պետրոսյան	Մարտուն	Հովհաննեսի			
Գորգինյան	Ռոման	Վանիկի			

Թումանյանի քաղաքապետ՝ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«04» փետրվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 2-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010Թ. ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համապատասխան.

Ընդունել՝ ի գիտություն Թումանյան համայնքի 2010թ. բյուջեի կատարման մասին հաղորդումը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ	Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Մարուքյան Միհրան Շաքարի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			
Գորգինյան Ռոման Վանիկի			

Թումանյանի քաղաքապետ /Լ. Ջավարյան/

Հավելված 1
Թումանյան համայնքի ավագանու
2011 թ 04. 02. - ի թիվ 2 - Ն որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2010թ-ի ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Թումանյան համայնքի 2010թ –ի տարեկան բյուջեն կատարվել է եկամուտների գծով՝ 98.8 %-ով, նախատեսված 28663.4 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 28326.5 հազ. դրամ: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ, եկամուտներ կապիտալ գործառնություններից) 4675.2 հազ. դրամի փոխարեն փաստացի մուտքերը կազմել են 4338.3 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 92.8 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետական բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 23388.2 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ կամ կատարման տոկոսը՝ 100.0 %, այդ թվում համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիա՝ 23388.2 հազ. դրամ,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100% : Պետության կողմից տեղական ինքնակառա - վարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետ. բյուջեից ստացվող միջոցները նախատեսված էր 600.0 հազ. դրամը,որը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝100.0% : Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը՝ 400.0 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100.0%:

1. Վարչական բյուջեի եկամուտներ

Վարչական բյուջեի 2010թ-ի տարեկան եկամուտները նախատեսված էր 28663.4 հազ. դրամ,փաստացի մուտքերը կազմել են 28326.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 98.8%: Սեփական եկամուտները (հարկային եկամուտներ և տուրքեր, ոչ հարկային եկամուտներ) նախատեսված էր 4675.2 հազ. դրամ, կատարվել է փաստացի մուտք 4338.3 հազ. դրամ կամ կատարմա ն տոկոսը՝ 92.8 %: Պաշտոնական տրանսֆերտների գծով եկամուտները (ՀՀ պետա-կան բյուջեից տրամադրվող դոտացիա) նախատեսված 23388.2 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100%: Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետ. բյուջեից ստացվող միջոցները նախատեսված էր 600.0 հազ. դրամը տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100.0%: Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքերը՝ 400.0 հազ. դրամը տրվել է ամբող-ջությամբ, կատարման տոկոսը՝ 100.0%:

1.1 Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները 2010թ-ի բյուջեով նախատեսված էր 603.0 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 668.1 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 127.2 %: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հողի հարկի կատարման տոկոսը աճել է:

1.2 Գույքահարկ

Գույքահարկը համայնքի վարչական տարածքում գտնվող շենքերի և շինությունների համար տարեկան բյուջեով նախատեսված էր 311.1 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 199.8 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 64.2 %, իսկ փոխադրամիջոցների համար

նախատեսված էր գույքահարկ 1073.1 հազ. դրամ, փաստացի մուտքերը կազմել են 874.1 հազ. դրամ, կամ կատարման տոկոսը 81.5 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

1.3 Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով եկամուտները նախատեսված էր 542.0 հազ. դրամ, փաստացի մուտքը կազմել է 470.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 86.8 %, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է :

1.4 Այլ եկամուտներ

Այս եկամտատեսակը 2010թ-ի բյուջեով նախատեսված էր 2746.0 հազ.դրամ, փաստացի մուտքը կազմել է 2720.2 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 99.1% :

1.5 Պաշտոնական ընթացիկ տրանսֆերտներ

Այս եկամտատեսակը նախատեսված էր 23388.2 հազ. դրամ, այն տրվել է ամբողջությամբ, կատարման տոկոսը՝ 100 %:

2. Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտները 2010թ-ի տարեկան բյուջեով նախատեսված էր 400.0 հազ. դրամ, որը՝ պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր են, փաստացի մուտքերը կազմում են 400.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100.0 %:

1. Վարչական բյուջեի ծախսերի կատարողականը

Վարչական բյուջեի ծախսերը 2010թ.- ի տարեկան բյուջեով նախատեսված էր 29031.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսվել է 27764.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 95.6 %:

1.1 Ըստ գործառնական դասակարգման ծախսերը կատարվել են

- Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների գծով ծախսերը 2010թ.-ի տարեկան բյուջեով նախատեսված 18489.3 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 18066.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 97.7 %:

* «Քաղաքացիական պաշտպանության» համար նախատեսվել էր 20.0 հազ. դրամ ծախս, փաստացի կատարվել է նույնքան դրամ ծախս, կատարման տոկոսը՝100.0 %: :

* Տնտեսական հարաբերությունների գծով ծախսերը 2010թ-ի տարեկան բյուջեով նախատեսված էր 600.0 հազ. դրամ ծախս, փաստացի ծախս կատարվել է 600.0 հազ. դրամ , այդ թվում՝ գյուղատնտեսություն `600.0 հազ. դրամ նախատեսված ծախսից վճարվել է 600.0 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝100.0%:
* Շրջակա միջավայրի պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 577.0 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 550,0 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 95.3 % :

* Հանգստի, մշակույթի և սպորտի ծառայությունների գծով ծախսերը նախատեսված էր 785.0 հազ. դրամ,փաստացի ծախսը կատարվել է 720.0 դրամ, կատարման տոկոսը՝ 91.7 %:

* Կրթության և գիտության գծով ծախսերը նախատեսված 6086.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսվել է 5682.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը 93.4 %, այդ թվում՝ նախադպրոցական կրթություն՝ 6086.0 հազ. դրամի դիմաց փաստացի ծախս կատարվել է 5682.4 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝93.4 %:

* Սոցիալական պաշտպանության գծով ծախսերը նախատեսված էր 1397.8 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 1397.8 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 100.0%:

* Հիմնական խմբին չդասվող ծախսերը նախատեսված էր 708.3 հազ. դրամ, փաստացի ծախս կատարվել է 400.0 հազ. դրամ կատարման տոկոսը՝ 56.5 %:

1.2.Ըստ տնտեսագիտական դասակարգման 2010 թ-ի տարեկան բյուջեով նախատեսված ծախսերը կատարվել են՝

* Աշխատատանքի վարձատրության համար նախատեսված 20800.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս 20649.4 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 99.3%,այդ թվում՝

ա) Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ նախատեսված 17060.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է ծախս 16909.4 հազ. դրամ, կատարման տոկոսը՝ 99.1 %:

բ) Պարտադիր սոց. ապահովագրական վճարները նախատեսված 3740.0 հազ. դրամի փոխարեն կատարվել է 3740.0 հազ. դրամի ծախս կամ կատարման տոկոսը՝ 100.0 %:

* Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման ծախսերը նախատեսված 6420.1 հազ. դրամի դիմաց կատարվել է փաստացի ծախս 5794.3 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 90.3 %:

* Սոցիալական նպաստներ և կենսաթոշակների գծով նախատեսված 500.0 հազ. դրամ, փաստացի ծախսի փոխարեն կատարվել է 500 ,0 հազ. դրամ ծախս կամ կատարման տոկոսը՝ 100,0%:

* Այլ ծախսերը՝այդ թվում պահուստային միջոցները նախատեսված էր 708.3 հազ. դրամ ծախս, սակայն փաստացի ծախս կատարվել է 400.0հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 56.5 %:

2.Ֆոնդային բյուջեի ծախսեր

Թումանյան համայնքի 2010թ.-ի ֆոնդային բյուջեով նախատեսված էր 767.6 հազ. դրամ ծախս, փաստացի ծախսը կատարվել է 766.5 հազ դրամ,կատարման տոկոսը՝ 99.9, այդ թվում ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերը նախատեսված 767.6 հազ. դրամի փոխարեն կատարվել է 766.5 հազ. դրամ կամ կատարման տոկոսը՝ 99.9 %:

Տարեկան բյուջեի կատարման բարձր ցուցանիշներին նպաստել է աշխատակազմի հետևողական և բարեխիղճ աշխատանքի:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Ջավարյան/

Կրտսեր պաշտոնների առաջին ենթախմբի առաջատար մասնագետ հաշվապահ՝ /Ա. Ամիրջանյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«04» փետրվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 3

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԻՐԵՆՑ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ-ԴՊՐՈՑ-ՏՈՒՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՈՎ ԱՆՎՃԱՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 3-րդ թաղամասի բնակիչների դիմումը, նրանց ընտանիքների սոցիալապես անապահով վիճակը.

Հանձնարարել Թումանյանի քաղաքապետ Լ. Զավարյանին.

1.Թումանյան քաղաքի 3-րդ թաղամասի աշակերտների տուն-դպրոց-տուն տեղափոխությունը միկրոավտոբուսով ս/թ հունվար ամսից կատարել անվճար:

2.Քաղաքապետարանի բյուջեից հատկացնել 320 հազ. դրամ՝ աշակերտների տուն-դպրոց-տուն տեղափոխությունը 2011թ. ընթացքում անվճար իրականացնելու համար:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ	Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Մարուքյան Միհրան Շաքարի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			
Գորգինյան Ռոման Վանիկի			

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«04» փետրվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 4-Ա

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գույքահարկի մասին» օրենքի 15 հոդվածի 3-րդ մասի պահանջով.

Թումանյան քաղաքի բնակիչ, սոցիալապես անապահով Քնարիկ Չերչինյանին ազատել անհատական օգտագործման ավտոմեքենայի վճարից

-հարկատուի գրանցման և գույքի գտնվելու վայրը՝ ք. Թումանյան

-արտոնության գումարի մեծությունը՝ 6000 դրամ:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ	Կողմ-6	Դեմ-0	Չեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Մարուքյան Միհրան Շաքարի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			
Գորգինյան Ռոման Վանիկի			

Թումանյանի քաղաքապետ /Լ. Ջավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«04» փետրվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 5

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՎ 04.07.1951Թ. ՁԱՌԻՁՈՐ ԱՎԱՆԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՏԻՊ ԱՎԱՆ ՎԵՐԱՆՎԱՆՎԵԼՈՒ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնարարել Թումանյանի քաղաքապետ Լ. Զավարյանին՝ ձեռնարկել միջոցառումների ծրագիր՝ ս/թ հուլիսի 4-ին Թումանյան քաղաքի վերանվանման 60-ամյակը մեծ շուքով նշելու կապակցությամբ:

Թումանյան քաղաքային համայնքի ավագանու անդամներ	Կողմ-6	Դեմ-0	Ձեռնպահ-0
Ռամազյան Անահիտ Հովհաննեսի			
Արզումանյան Աշխեն Աշխարհբեկի			
Մարուքյան Միհրան Շաքարի			
Շահվերդյան Սեյրան Սուրիկի			
Պետրոսյան Մարտուն Հովհաննեսի			
Գորգինյան Ռոման Վանիկի			

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

«04» փետրվարի 2011թ. Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 5-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 65 հոդվածի և առաջնորդվելով Թումանյան համայնքի 2011թ. բյուջեն հաստատելու մասին ավագանու 04.02.2011թ. թիվ 1-Ն որոշմամբ.

1.Հաստատել համայնքի 2011թ. բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը /հավելված 1,2/:

2.Հաստատել համայնքային ենթակայության բյուջետային հիմնարկի 2011թ. ծախսերի նախահաշիվները՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման հոդվածների /հավելված 2,4/:

Թումանյանի քաղաքապետ /Լ. Զավարյան/